ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1403 19.02.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը իր գործունեության 7 տարիների ընթացքում բազմիցս անդրադարձել է ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Մասիսի ՁՊՎ-ում առկա բարձր խոնավության աստիճանին:

Խոնավության բարձր մակարդակը ՁՊՎ-ի պահման պայմանները դարձրել է ոչ պիտանի այնտեղ անձանց պահելու համար և միաժամանակ վնասակար ազդեցություն է թողնում ինչպես ՁՊՎ-ում պահվող անձի, այնպես էլ ՁՊՎ-ում ծառայություն իրականացնող ոստիկանի առողջությանը:

Չնայած մի քանի անգամ տարված վերանորոգման աշխատանքներին՝ ՁՊՎ-ն այնուամենայնիվ ամբողջությամբ գտնվում է ծայրահեղ վիճակում և Դիտորդական խումբը գտնում է, որ ՁՊՎ-ն շահագործման ենթակա չէ:

Ուստի՝ խնդրում ենք դադարեցնել Մասիսի ՁՊՎ-ի գործունեությունը և այնտեղ իրականացնել համապատասխան վերանորոգման աշխատանքներ:

Կից ներկայացված են Մասիսի ՁՊՎ-ի լուսանկարները:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ... ՀՍԱԲ
425
20 02 2014թ.

ՀՀ ...
7046
20 02 2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1- 445 «26» 02 2014թ.

Ձեր 19.02.2014թ. թիվ 2621/1403 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի բաժնի ՁՊՎ-ի շահագործումը, խոնավության բարձր մակարդակի պատճառով, ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ Ձեր գրությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում, որի կապակցությամբ հայտնվում է, որ հիշյալ խնդիրն արձանագրվել է նաև 2013թ. սեպտեմբերին՝ ՀՀ ոստիկանության շտաբի կողմից իրականացված համալիր-տեսչական ստուգումների արդյունքներով: Բացի այդ, դեռևս 23.10.2013թ-ին ՀՀ ոստիկանության պետի մոտ կայացած օպերատիվ խորհրդակցության ժամանակ ոստիկանության պետի կողմից հանձնարարական է տրվել համապատասխան ծառայություններին՝ հաշվարկել տարածքային ստորաբաժանումների շենքային պայմանների, այդ թվում՝ հերթապահ մասերի, ՁՊՎ-ների վերանորոգման աշխատանքների համար նախատեսվող ծախսերը և զեկուցել: Ի կատարումն ՀՀ ոստիկանության պետի հանձնարարականի, ուսումնասիրության արդյունքում ոստիկանության Մասիսի բաժնի ՁՊՎ-ի վերանորոգման համար կազմվել է նախահաշվարկ և հանձնարարվել կատարել շինարարական աշխատանքներ:

Ներկայումս հիշյալ խնդրի կարգավորման գործընթացը գտնվում է փաստաթղթային ձևակերպումների փուլում և վերանորոգման աշխատանքները սկսելու ու Մասիսի բաժնի ՁՊՎ-ի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում կհայտնվի լրացուցիչ:

ՀՀ ոստիկանության շտաբ